

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10-ԻՆ ԵՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՒՄ-ԱՌԱՋԻՆ ՓՈԻԼ» ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԲՅՆ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

7 սեպտեմբերի 2012թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարոյթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուդյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Նովհաննիսյանի, Ն. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Նայասարանի Նանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դրնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2012 թվականի մայիսի 10-ին եւ 2012 թվականի մարտի 12-ին ստորագրված՝ Նայասարանի Նանրապետության եւ Եվրոպական ներդրումային բանկի միջեւ «Երևանի մետրոպոլիտենի վերակառուցում-առաջին փուլ» ֆինանսական պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապարասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Նայասարանի Նանրապետության Նախագահի՝ 20.07.2012թ. ՆՏ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով քննության առարկա համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Համաձայնագիրն ստորագրվել է՝ 2012 թվականի մարտի 12-ին Եվրոպական ներդրումային բանկի կողմից եւ 2012 թվականի մայիսի 10-ին Նայասարանի Նանրապետության կողմից՝ ֆինանսական պայմանագրի տեխնիկական նկարագրում փոփոխություններ կատարելու նպատակով: 2010 թվականի օգոստոսի 10-ին ստորագրված՝ Նայասարանի Նանրապետության եւ Եվրոպական ներդրումային բանկի միջեւ «Երեւանի մեթրոպոլիտենի վերակառուցում-առաջին փուլ» ֆինանսական պայմանագրի (Նայասարանի Նանրապետությունը վավերացրել է 2011 թվականի փետրվարի 10-ին) նպատակն է Երեւանի մեթրոպոլիտենի ընդհանուր եւ հրապապ վերականգնումը:

2. Համաձայնագրով Նայասարանի Նանրապետությունը պարտավորվում է ֆինանսական պայմանագրի «Ա» հավելվածի «Ա.1. տեխնիկական նկարագիրը» փոփոխել համաձայնագրում ներկայացված «Ա.1. տեխնիկական նկարագրությամբ» եւ ապահովել ծրագրի իրականացումն ըստ վերոնշյալ նկարագրության:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2012 թվականի մայիսի 10-ին եւ 2012 թվականի մարտի 12-ին ստորագրված՝ Նայասարանի Նանրապետության եւ Եվրոպական ներդրումային բանկի միջեւ «Երեւանի մեթրոպոլիտենի վերակառուցում-առաջին փուլ» ֆինանսական պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՏՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

7 սեպտեմբերի 2012 թվականի
ՍԴՈ-1040